

ANNONCE

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Offre d'une Bourse SoftConstruct d'études en doctorat à l'UFAR (Arménie) et à l'Université de Lyon 3 (France)

Domaine scientifique: Sciences de gestion / Marketing

Durée : 3 ans, à partir de septembre 2022

Langue de rédaction et de la soutenance de thèse : français

Titre de la thèse de sciences de gestion / marketing: Marketing digital

Lieu de la thèse : UFAR, Arménie

Un supplément d'information sera communiqué sur demande par le Responsable de la Recherche de l'UFAR.

ՀՖՀՀ-ում (Հայաստան)և Լիոն 3 համալսարանում (Ֆրանսիա) ասպիրանտուրայի ուսումնառության կրթաթոշակ՝ տրամադրված Սոֆթ Կոնստրակտ ՓԲԸ-ի կողմից

Մասնագիտություն՝ Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում

Տևողությունը՝ 3 տարի՝ 2022թ.-ի սեպտեմբերից սկսած

Ատենախոսության գրելու և պաշտպանության լեզուն՝ ֆրանսերեն

Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտության և կառավարման գծով ատենախոսության անվանումը՝ Թվային մարքեթինգ

Ուսուցման վայրը՝ ՀՖՀՀ, Հայաստան

Լրացուցիչ տեղեկություն կտրամադրվի ՀՖՀՀ-ի հետազոտությունների պատասխանատուին՝ ըստ պահանջի:

1. L'organisation du doctorat

1. Ասպիրանտուրայի ուսումնառության կազմակերպումը

1.1. Le Doctorant est inscrit en thèse au sein de l'université française partenaire, sous la responsabilité d'un directeur de thèse de cette université. Un co-directeur à l'Université Française en Arménie (UFAR) peut être désigné au sein de l'UFAR, dont la mission est l'encadrement au quotidien du Doctorant en Arménie.

1.2. Le Doctorant est officiellement rattaché à l'institut de recherche en France de son directeur de thèse. Il y fait et publie des recherches,

1.1. Ասպիրանտը գրանցվում է ֆրանսիական գործընկեր համալսարանում, որտեղ նրա համար նշանակվում է գիտական ղեկավար: Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամից (ՀՖՀՀ)-ում կարող է նշանակվել համաղեկավար, որի առաքելությունը ասպիրանտի ղեկավարումն է Հայաստանում:

1.2. Ասպիրանտը գրանցվում է Ֆրանսիայում իր գիտական ղեկավարի գիտահետազոտական ինստիտուտում, կատարում և հրատարակում է

bénéficie de toutes les ressources scientifiques ainsi mises à sa disposition par l'université française partenaire.

1.3. Quand les conditions le permettent, le Doctorant se déplace chaque année dans l'université française partenaire quelques semaines consécutives (maximum 2 mois par an), pour travailler avec son directeur de thèse, participer aux travaux de recherche et de publication de l'université partenaire.

1.4. À l'UFAR, le Doctorant accomplit ses travaux de recherches et il est intégré au processus pédagogique, il enseigne et participe à des projets pédagogiques.

1.5. Le Doctorant doit chaque année réaliser 64 heures d'enseignement, sans rémunération supplémentaire en fonction des besoins déterminés par le doyen de la faculté auquel le Doctorant est rattaché. Si le nombre de cours dépasse 64 heures, le Doctorant sera payé au tarif habituel de l'UFAR. Le volume d'enseignement du Doctorant ne peut pas dépasser 100 heures par an.

1.6. En relation avec son obligation d'enseignement, le Doctorant réalise la correction des copies d'examens de ses étudiants (sans rémunération supplémentaire correspondant aux 64 heures de cours initiale prévu dans l'article 1.5.).

1.7. Pour les activités mentionnées au point 1.4., le Doctorant se trouve sous la direction générale

գիտահետազոտական աշխատանքներ, օգտվում է ֆրանսիական գործընկեր համալսարանի գիտահետազոտական բոլոր ռեսուրսներից:

1.3. Հնարավորության դեպքում Ասպիրանտը տարեկան մի քանի շաբաթ շարունակաբար (1 տարվա ընթացքում առավելագույնը 2 ամիս) գործուղվում է Ֆրանսիայի գործընկեր համալսարան՝ գիտական ղեկավարի հետ աշխատելու, գործընկեր համալսարանի հետազոտական աշխատանքներին և գիտական հրապարակումներին մասնակից լինելու համար:

1.4. Ասպիրանտը ՀՖՀՀ-ում պետք է իրականացնի գիտահետազոտական աշխատանք և ներգրավվում մանկավարժական գործընթացում. դասավանդում, մասնակցություն տարբեր մանկավարժական նախագծերի:

1.5. Յուրաքանչյուր տարի Ասպիրանտը պետք է 64 ժամ դասավանդի առանց լրացուցիչ վարձատրության, որի համար համապատասխան ֆակուլտետի ղեկանը պետք է դասավանդման պահանջարկ արձանագրի: Եթե դասավանդած ժամերի քանակը գերազանցում է 64 ժամը, Ասպիրանտը վճարվում է ՀՖՀՀ սովորական դրույքաչափով: Տարվա ընթացքում Ասպիրանտի կողմից դասավանդվող ժամերը չեն կարող գերազանցել ընդհանուր 100 ժամը:

1.6. Մանկավարժական գործընթացում իր ներգրավվածության շրջանակում Ասպիրանտը ստուգում է իր ուսանողների քննական աշխատանքները (առանց լրացուցիչ վարձատրության 1.5. դրույթում նշված 64 ժամերի շրջանակներում):

1.7. Պայմանագրի 1.4.-րդ կետում նախատեսված գործողությունների մասով Ասպիրանտը գտնվում

du Recteur de l'UFAR et sous la direction directe du responsable pédagogique (doyen) de la faculté concernée, et collabore avec les autres services de l'UFAR d'après l'organigramme hiérarchique.

է ՀՖՀՀ-ի Ռեկտորի և համապատասխան ֆակուլտետի ղեկավարի (դեկանի) անմիջական ղեկավարության ներքո, համագործակցում է ՀՖՀՀ այլ բաժինների հետ՝ հիերարխիկ օրգանիզրամայի համաձայն:

2. Droits et obligations des parties

2. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

2.1. L'UFAR s'engage à :

2.1.1. Inscrire par ordre du recteur, le candidat retenu d'après les résultats d'admission comme Doctorant à l'UFAR.

2.1.2. Formaliser en collaboration avec le directeur de thèse le plan du travail du Doctorant pour la période de ses études en doctorat et notamment les périodes de séjour en France.

2.1.3. En conformité avec le plan du travail, réaliser une réunion formelle d'avancement des travaux du Doctorant chaque année en présence du directeur de thèse.

2.1.4. Mettre à la disposition du Doctorant un espace de travail et un ordinateur portable individuel.

2.1.5. Organiser le rattachement du Doctorant à l'université partenaire de France, et le soutien professionnel dans le processus de préparation de la thèse.

2.1. ՀՖՀՀ-ն պարտավորվում է՝

2.1.1. Ասպիրանտուրայի ընդունելության արդյունքներով ընտրված դիմորդին ռեկտորի հրամանով ձևակերպել որպես ՀՖՀՀ-ի ասպիրանտ:

2.1.2. Ասպիրանտուրայում ուսումնառության ժամանակահատվածի համար գիտական ղեկավարի հետ միասին հաստատել Ասպիրանտի աշխատանքային պլանը և, հատկապես, Ֆրանսիա գործուղման ժամանակացույցը:

2.1.3. Ասպիրանտի աշխատանքային պլանին համապատասխան՝ գիտական ղեկավարի մասնակցությամբ անցկացնել Ասպիրանտի աշխատանքների առաջընթացի վերաբերյալ տարեկան ժողով:

2.1.4. Ասպիրանտին հատկացնել առանձին աշխատատեղ և համակարգիչ:

2.1.5. Կազմակերպել Ասպիրանտի ամրակցումը Ֆրանսիայի գործընկեր համալսարանին, ատենախոսության պատրաստման գործընթացում ապահովել մասնագիտական աջակցություն:

2.1.6. Si le voyage en France a lieu, prendre à sa charge, les frais de transport et d'hébergement relatifs du séjour annuel de quelques semaines consécutives en France du Doctorant (maximum 2 mois).

2.1.7. Accorder une bourse de thèse annuelle selon les modalités décrites dans l'article 3 du présent contrat.

2.2. Le Doctorant s'engage à :

2.2.1. Être présent à temps plein à l'UFAR, en soutenant la chaire ou la faculté dont il relève, lors des activités pédagogiques et de recherche, ainsi que dans l'organisation d'évènements.

2.2.2. N'avoir aucun autre emploi rémunéré ou non et donc faire uniquement sa thèse de Doctorat.

2.2.3. À suivre les cours obligatoires organisés dans le cadre de la formation doctorale en France et/ou à l'UFAR.

2.2.4. Coopérer avec son directeur de thèse et son référent de l'UFAR.

2.2.5. Présenter chaque année un rapport écrit à l'UFAR et/ou l'organisme co-financeur du doctorat, conformément au plan du travail (voir le document en annexe). Ce rapport devra être signé par le Doctorant et le directeur de thèse.

2.2.6. Réaliser et publier des travaux de recherches, outre la thèse qui doivent

2.1.6. Եթե Ֆրանսիա ուղևորությունը տեղի է ունենում, փոխհատուցել տրանսպորտի և կացարանի ծախսերը՝ կապված ասպիրանտի մի քանի շաբաթ անընդմեջ Ֆրանսիայում գտնվելու հետ (առավելագույնը 2 ամիս):

2.1.7. Ասպիրանտին տալ տարեկան կրթաթոշակ՝ սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված կարգով:

2.2. Ասպիրանտը պարտավորվում է՝

2.2.1. Լրիվ աշխատանքային օրվա գրաֆիկով ներկա լինել ՀՖՀՀ-ում՝ օժանդակելով համապատասխան ամբիոնին կամ ֆակուլտետին մանկավարժական և գիտահետազոտական գործունեության իրականացման և միջոցառումների կազմակերպման ընթացքում:

2.2.2. Չունենալ վճարվող կամ չվճարվող այլ աշխատանք և ուրեմն իրականացնել միայն իր ատենախոսության խմբագրումը:

2.2.3. Հաճախել ասպիրանտական կրթության շրջանակներում Ֆրանսիայում կամ ՀՖՀՀ-ում կազմակերպվող պարտադիր դասընթացներին:

2.2.4. Համագործակցել իր գիտական ղեկավարի և ՀՖՀՀ ռեֆերենտի հետ:

2.2.5. Աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի գրավոր հաշվետվություն ներկայացնել ՀՖՀՀ-ին և/կամ գիտական հետազոտությունը համաֆինանսավորող կառույցին:

2.2.6. Բացի ատենախոսությունից իրականացնել և հրատարակել գիտական հետազոտություններ, որոնց մեջ պարտադիր կիիշատակվի

obligatoirement mentionner le rattachement du Doctorant à l'UFAR et à son Université associée.

2.2.7. Finir et soutenir la thèse en 3 ans à compter de la signature du présent Contrat.

2.2.8. S'acquitter des droits d'inscription annuels en doctorat à l'université française partenaire.

2.2.9. Apporter son soutien à l'enseignement à l'UFAR, autant que faire se peut, au cours des 3 années universitaires qui suivront la soutenance de la thèse.

2.2.10. Respecter les statuts, le règlement intérieur et les actes juridiques internes de l'UFAR.

Ասպիրանտի կցումը ՀՖՀՀ-ին և գործընկեր համալսարանին:

2.2.7. Ատենախոսությունը ավարտել և պաշտպանել՝ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից երեք տարվա ընթացքում:

2.2.8. Վճարել Ֆրանսիայի գործընկեր համալսարանում գործող ասպիրանտուրայի տարվա վարձավճարը:

2.2.9. Ատենախոսության պաշտպանությունից հետո 3 ուսումնական տարի դասավանդել ՀՖՀՀ-ում, եթե հնարավոր է:

2.2.10. Հարգել ՀՖՀՀ-ի կանոնադրությունը, ներքին կանոնակարգը և ներքին իրավական ակտերը:

3. Montant de la bourse et le système de paiement

3.1. Le Doctorant reçoit une bourse annuelle de 2100 000 AMD (en fonction des financements impliqués), soit un montant mensuel net de 175 000 AMD.

3.2. La bourse vise à assurer la présence à temps plein du Doctorant à l'UFAR afin de lui fournir le temps nécessaire et suffisant pour travailler sur son sujet de thèse et le conduire à terme dans un délai de 3 ans.

3.3. La bourse est offerte par l'organisation Softconstruct.

3.4. L'organisation qui attribue la bourse a le droit de collaborer avec le Doctorant pendant la

3. Կրթաթոշակի չափը և վճարման կարգը

3.1. Ասպիրանտին տրվում է կրթաթոշակ (կախված ներգրավված ֆինանսական միջոցներից)՝ տարեկան 2100 000 ՀՀ դրամի չափով՝ ամսական 175 000 դրամ զուտ վճարումներով:

3.2. Կրթաթոշակի նպատակն է ապահովել Ասպիրանտի մշտական ներկայությունը ՀՖՀՀ-ում՝ ատենախոսության խմբագրմանն անհրաժեշտ բավարար ժամանակ ունենալու և 3 տարում այն ավարտելու համար:

3.3. Կրթաթոշակը տրամադրվում է Softconstruct կազմակերպության կողմից:

3.4. Կրթաթոշակ տրամադրող կազմակերպությունը իրավունք ունի համագործակցել Ասպիրանտի հետ

période de la préparation de la thèse, y compris en lui proposant des recherches distinctes dans le cadre du sujet.

3.5. Le montant de la bourse est fixé pour toute la période de formation du Doctorant et ne peut excéder 3 années. Advenant une extension d'inscription doctorale au sein de l'université partenaire française, une bourse additionnelle pourrait être octroyée par décision spéciale du Recteur.

3.6. La bourse est versée mensuellement sur le compte bancaire du Doctorant.

3.7 Les demandes d'information doivent être transmises à Aram Yesayan, Responsable de la recherche de l'UFAR, à l'adresse respch_math_stat@ufar.am ou à Anna Bughdaryan, assistante pédagogique de la faculté de finances, à l'adresse ap_finances@ufar.am ou en appelant au 060 27 96 61.

Dépôt de candidature

- L'ensemble du dossier de candidature doit être transmis au plus tard le 15 août 2022 à 12h (midi, heure d'Erevan), à Madame Anna Bughdaryan, assistante pédagogique de la faculté de Finances (bureau 107).
- Les documents requis sont :
 - Lettre de motivation en français ou anglais justifiant l'intérêt pour les études en doctorat et le sujet de recherche,
 - 1 photo d'identité,

ատենախոսության պատրաստման ընթացքում նրան առաջարկելով նաև թեմայի շրջանակում առանձին հետազոտություններ:

3.5. Կրթաթոշակի չափը սահմանվում է Ասպիրանտի ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ 3 տարուց ոչ ավելի: Այն դեպքում, երբ Ֆրանսիայի գործընկեր համալսարանի կողմից գրանցման ժամկետը երկարաձգվի՝ կրթաթոշակի հավելյալ տրամադրման վերաբերյալ կարող է ռեկտորի կողմից կայացվել հատուկ գրավոր որոշում:

3.6. Կրթաթոշակը փոխանցվում է ասպիրանտի բանկային հաշվին յուրաքանչյուր ամիս:

3.7. Տեղեկատվություն ստանալու համար հարցերը ուղղվում են ՀՖՀՀ գիտական հետազոտությունների պատասխանատու Արամ Եսայանին, էլ. հասցե՝ respch_math_stat@ufar.am կամ ՀՖՀՀ ֆինանսների ֆակուլտետի մանկավարժական օգնական Աննա Բուղդարյանին, էլ. հասցե՝ ap_finances@ufar.am, հեռ.՝ 060 27 96 61:

Հայտերի ընդունում

- Ասպիրանտուրա ընդունվելու դիմումները պետք է ներկայացվեն մինչև ս.թ. օգոստոսի 15 -ը, ժամը 12:00՝ ՀՖՀՀ ֆինանսների ֆակուլտետի մանկավարժական օգնական Աննա Բուղդարյանին (107 սենյակ):
- Պահանջվող փաստաթղթերն են.
 - Հետազոտության թեման և ասպիրանտուրայում սովորելու ցանկությունը հիմնավորող մոտիվացիոն նամակ ֆրանսերեն կամ անգլերեն լեզվով,

Erevan, le 22 juillet 2022

- CV en français,
 - Copie des travaux scientifiques publiés s'il y en a et leur résumé en français s'ils sont dans une autre langue,
 - Copie d'un mémoire de recherche ou à défaut un mémoire réalisé durant les études montrant les qualités de rédaction du candidat,
 - Copie des diplômes,
 - Relevé des notes dans l'enseignement supérieur,
 - Copie de l'attestation justifiant la connaissance du français au niveau B2 du Cadre européen commun de référence pour les langues (si le candidat a cette attestation),
 - Lettres de recommandation (ces lettres peuvent être jointes au dossier si le candidat le souhaite).
- Les candidats présélectionnés en fonction des documents écrits seront invités à un entretien de sélection.
- 1 լուսանկար,
 - Ինքնակենսագրություն ֆրանսերեն լեզվով,
 - Հրապարակված գիտական աշխատանքների պատճենները /եթե առկա են/, ինչպես նաև դրանց ամփոփումը ֆրանսերեն լեզվով, եթե այլ լեզվով են,
 - Կատարած հետազոտական աշխատանքի կամ դրա բացակայության պարագայում ուսումնառության ընթացքում իրականացված դիպլոմային աշխատանքի պատճենը՝ դիմորդի խմբագրական հմտությունները պարզելու համար,
 - Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում ստացած գնահատականների ամփոփագիրը,
 - Բարձրագույն կրթության առկայությունը հավաստող դիպլոմների պատճենները,
 - Ֆրանսերենի իմացության ընդհանուր եվրոպական շրջանակի B2 մակարդակի հավաստագրի պատճենը (եթե դիմորդն ունի այդ հավաստագիրը),
 - Երաշխավորագիր նամակներ (կարող են կցվել դիմումին դիմորդի ցանկությամբ):
- Ներկայացված փաստաթղթերի հիման վրա ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: